

անդր սահմանեցաւ պատերազմն, ոչ գիտեմ յորմէ՞ կողմանէ գրգռեալ. գառաջինն յաղթող գտաւ զունդն Կոստանդնի, վարեաց զընդդիմակացսն եւ հետամուտ եղեւ. զնոյն համարէր թէ գործիցէ եւ Սիր Ատան, միաբան շարժամար զմիւս թեւն բաղխելով. այլ սա դանդաղեաց, կամ բնաւ իսկ խառնեցաւ՝ ի պատերազմն²²⁸. յորմէ քաջալերեալ այլազգեացն՝ պաշարեցին՝ իթիկանց զգունդն Կոստանդնի, դարձան եւ հալածեալքն՝ ի դիմաց, եւ ի մէջ փակեալ՝ շուրջ գեղան, նեղեցին, եւ ստիպեցին՝ փոխանակ անպուրծ մահուան՝ անձնատուր լինել. եւ այնպէս գերի անկան՝ ինքն Գունդստապլն Հայոց, եւ անուանակից իւր Կոստանդին Լամբրունեցին, Կիո Սահակ տէրն Սիկոյ բերդի, Վասիլ Օքսենց²²⁹, եւ այլ եւս իշխանք եւ ձիաւորք. յորոց եւ ոչ սակաւք անկան՝ իմարտին: Եւ սուլտանն առեալ զգերութիւնն՝ մեծաւ ուրախութեամբ դարձաւ անդրէն պնդել զպաշարումն Կապանին: Վիպասանն Վահրամ համարի՝ եթէ Լեւոնի արձակեալ զգօրսն՝ կամէր ինքնին այլովք գնդովք երթալ զհետ նոցա.

«Սակայն զօրացն անմըտացեալ
Եւ արքայի ոչ մընացեալ.
Այլ յերեւել՝ իմարտ մըտեալ,
Եւ յայլազգեացըն պարտեցեալ.
Յովովք՝ խուր եղեն մատնեալ
Այլըք կապով գերի վարեալ»:

Սակայն ոչ թուի ստոյգ՝ իսկզբան զայս կամեցեալ առնել Լեւոնի, մինչ գերկոսին աւագագոյնս՝ իպարոնայցն եւ պաշտօնէից՝ յորս վստահ էր, բազմութեամբ զօրացն առաքեալ էր՝ իմարտ. այլ՝ իլսել զվատթարել բանակին եւ զվտանգ աշխարհապահ բերդին, մոռացեալ զտկարութիւն մարմնոյն, եւ յիշեալ զհնարսն՝ որով՝ իսկզբան անդ տէրութեանն աջողեցաւ գառաջին ընդդիմամարտն վանել, ժողովեալ զկաց մնաց զօրականին՝ երիտասարդօրէն երագութեամբ խաղալով ընդ զանխուլ ուղի՝ մխեցաւ՝ իսահմանս Կեսարիոյ, եւ սկսաւ ասպատակաւ կոխել, կողոպտել, աւերել, եւ շրջան առեալ դառնալ ընդ նոյն: Ընդ անակնկալ

²²⁸ «

Երեսնամեակի զօրքն չօգնեաց իւրեանց»:

²²⁹ Յօրինակին գրեալ էր «զԱսել զՕքսենց»: